ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 85-Լ

«01» 11 2024 թ. ք. Երևան

ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2024 թվականի հունիսի 24-ի թիվ ԿԽ-007/24 որոշմամբ հաստատված՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության գործառույթ իրականացնող դատախազների թեկնածությունների 2024 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման երկրորդ հատվածի ընթացքում դասավանդվող առարկայական կուրսերի արդյունքները գնահատելու, իսկ արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար, համապատասխանաբար, գնահատման և բողոքարկման հանձնաժողովներում դատախազ անդամներ նշանակելու անհրաժեշտությունից, հիմք ընդունելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

1. Պետական (համայնքային) շահերի պաշտպանության գործառույթ իրականացնող դատախազների թեկնածությունների 2024 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման երկրորդ հատվածի հատուկ մասնագիտական դասընթացների արդյունքները գնահատելու համար ձևավորել գնահատման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Տաթևիկ Սարուխանյան - ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ,

Էդուարդ Գասպարյան - ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի տեղակալ,

Կարապետ Հակոբյան - ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազ,

Ֆիլիանա Բելլույան - ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ,

Գոհար Ղուկասյան - ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ (գործուղված):

2. Պետական (համայնքային) շահերի պաշտպանության գործառույթ իրականացնող դատախազների թեկնածությունների 2024 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման երկրորդ հատվածի հատուկ մասնագիտական դասընթացների արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորել բողոքարկման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Լիլիթ Գրիգորյան - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Սոնա Հովսեփյան - ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի տեղակալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր

դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Արդարադատության ակադեմիայի ռեկտորին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**